ՈԱՍԿ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը	Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան
Հասցեն	ԵՊԼՀ
Գործունեության հասցեն	Թումանյան փող. 42, Երևան, 0009, ՀՀ
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը	Չի ունեցել

ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով՝ ՈԱԱԿ-ի ներկայացուցիչների, փորձագիտական խմբի, գործընթացի ՈԱԱԿ համակարգողի մասնակցությամբ քննարկեց Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի (այսուհետ՝ ԵՊԼՀ) կողմից ներկայացված ինքնավերլուծության, փորձագիտական զեկույցի, զեկույցում նշված թերությունների վերացման մասին ԵՊԼՀ-ի գործողությունների ծրագրի և այդ ծրագրի վերաբերյալ փորձագիտական խմբի կարծիքի հիման վրա կազմված ԵՊԼՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ ՈԱԱԿ-ի եզրակացության նախագիծը:

քննարկման արդյունքում ամրագրեց հետևյալը:

Հավատրմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	**12 մարտի 2012,**
բուհի ինքնավերլուծության ներկայացում՝	**27 դեկտեմբերի 2012,**
փորձագիտական այցի իրականացում՝	**13-17 մայիսի 2013,**
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	**1 օգոստոսի 2013,**
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝	**14 փետրվարի 2014:**

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով[2]:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Գնահատում իրականացնելիս հաշվի է առնվել, որ ԵՊԼՀ-ն հանդիսանում է լեզվաբանական, հումանիտար և միջմշակութային հաղորդակցության ոլորտների կրթություն ապահովող ազդեցիկ դերակատար: Համալսարանը ձգտում է ստանձնել լեզուների և բազմազան մշակույթների վերաբերյալ տեղեկատվության, հանդուրժողականության և գործընկերության գաղափարների ու ժողովրդավարական արժեքների տարածման կենտրոնի դերակատարություն:

Իր գործունեության ընթացքում համալսարանը հավատարմագրում չի անցել. կրթության որակի ապահովումը իրականացվել է որակի վերահսկման որոշ մեխանիզմների կիրառման միջոցով: Հավատարմագրման այս գործընթացը ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության համալսարանի առաջին փորձն է՝ կրթական միջավայրի բավարարության, ծրագրերի իրականացման արդյունավետության, հասարակության առջև հաշվետվողականության և վերջերս ներդրված որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքի ինքնագնահատման նպատակով:

ԵՊԼՀ-ում կրթություն է իրականացվում բարձրագույն կրթության բոլոր երեք (բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի) մակարդակներով: Բակալավրական կրթական ծրագրեր են իրականավում «Լեզվաբանություն», «Օտար լեզու և գրականություն», «Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն», «Թարգմանչական գործ», «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտությունների գծով: Մագիստրոսի մակարդակում կրթական ծրագրեր են իրականացվում «Լեզվաբանություն», «Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն», «Թարգմանչական գործ», «Օտար լեզու և գրականություն», «Հանրային կառավարում», «Լրագրություն», «Եվրոպագիտություն» մասնագիտությունների գծով: Հետազոտողի կրթական ծրագրերը իրականացվում են բանասիրության, լեզվաբանության, ընդհանուր և կիրառական լեզվաբանության, սլավոնական, գերմանական և ռոմանական լեզուների, մանկավարժության պատմության և տեսության ու դասավանդման մեթոդիկաների ուղղություններով:

Բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերի դասընթացների մակարդակով ԵՊԼՀ-ում առկա են հստակ ձևակերպված ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներ, իսկ ԵՊԼՀ-ում կիրառվող դասավանդման և ուսումնառության բազմազան մեթոդները հիմնականում նպաստում են այդ վերջնարդյունքների ձևավորմանը:

Դասավանդման գործընթացում արդի հետազոտությունների ներդրման մակարդակը ԵՊԼՀ-ում դեռևս ցածր է:

Ներկայումս ԵՊԼՀ ակտիվ գործընթացներ է կատարում ՄԿԾ-ների մակարդակում վերջնարդյունքները միջազգային նորմերին համապատասխան հստակ ձևակերպելու համար:

---

[1] **Հավելված 1** ՝ Փորձագիտական խմբի կազմը և ՈԱԱԿ-ի աջակցող անձնակազմը

[2] **Հավելված 2**՝ ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կրթական ծրագրերի միջազգայնացման նպատակով համալսարանը TEMPUS-ի ծրագրերի շրջանակներում համագործակցում է մի շարք Եվրոպական համալսարանների հետ:

ԵՊԼՀ-ն ապահովում է ՄԿԾ-երի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, որը ներառում է շենքային և գույքային պայմանները, գրադարանը, տեղեկատվական և հաղորդակցական սարքավորումները: ԵՊԼՀ-ում ստեղծված են պայմաններ անվտանգության և առողջության պահպանման համար, սակայն սննդի կազմակերպման և մարզական պայմանները բարելավման կարիք ունեն: ԵՊԼՀ-ում գործում են նաև պահնորդային ծառայությունները և քաղաքացիական պաշտպանության կառույցը:

Ֆինանսական ռեսուրսների անբավարարությունը խոչընդոտում է հետազոտությունների և միջազգայնացման նպատակով տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ արդյունավետ համագործակցությանը: Լիարժեք չեն օգտագործվում միջազգային դրամաշնորհային ծրագրերից լրացուցիչ ֆինանսավորում ստանալու հնարավորությունները:

Վերջին տարիներին համալսարանում փորձեր են արվում գտնել ֆինանսավորման նոր աղբյուրներ: Համալսարանին հաջողվել է աջակցություն ստանալ օտարերկրյա պետությունների կառավարություններից և դեսպանատներից, որոնց շնորհիվ հարստացվել են դասախոսներին և ուսանողներին տրամադրվող ռեսուրսները: Որոշ չափով ռեսուրսները համալրվել են նաև տեղական բիզնեսի շնորհիվ:

ԵՊԼՀ-ն ապահոված է իր կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ դասախոսական կազմով: Բուհի 383 դասախոսներից 12-ը գիտությունների դոկտոր են, 12-ը՝ պրոֆեսոր, 145-ը գիտությունների թեկնածու և 81-ը դոցենտ:

ԵՊԼՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված որոշ աշխատանքներ, սակայն դրանք համակարգված չեն: Որպես կանոն վերապատրաստումները իրականացվում են դասախոսների նախաձեռնությամբ, դրամաշնորհների շրջանակներում:

Դասախոսների գիտական հետազոտությունների օժանդակման և միջազգայնացման համար բուհում պարբերաբար կազմակերպվում են գիտական միջոցառումներ, հնարավորինս ապահովելով օտարերկրյա գիտնականների մասնակցությունը: Գիտական ոլորտում միջազգային համագործակցության ապահովման նպատակով գործընկեր համալսարանների հետ կազմակերպվում են համատեղ հետազոտություններ, որոնց արդյունքները տպագրվում են միջազգային գիտական հանդեսներում: Սակայն այդ ուղղությամբ համալսարանը դեռ զգալի արդյունքների չի հասել՝ Հայաստանից դուրս հրատարակված հոդվածների ցանկը համեմատաբար սահմանափակ է:

Ուսումը ավելի մատչելի դարձնելու և ուսանողներին աջակցման նպատակով բուհը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ, խորհրդատվությունները իրականացվում են ըստ սահմանված ժամանակացույցերի:

ԵՊԼՀ-ում բազմաբնույթ միջոցառումների կազմակերպման, ուսանողների աջակցության և շահերի պաշտպանության ուղղությամբ ակտիվ է գործում ուսանողական խորհուրդը, որին նույնիսկ հատկացվում է առանձին բյուջե: Կարիերայի կենտրոնը պարբերաբար իրականացնում է գործատուների և ուսանողների հանդիպումներ: ԵՊԼՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ: ԵՊԼՀ-ն ունի ուսանողների կարիքների վերհանմանը և բավարարմանը նպաստող մի շարք կարգեր: ԵՊԼՀ-ում մշակվել են «Ուսանողների բավարարվածության գնահատում» հարցաշարեր, կատարվել է փորձնական հարցում:

ԵՊԼՀ-ն ունի կառավարման հստակ համակարգ: Առկա են կառավարման մարմինների ընտրության, գիտական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնների զբաղեցման հստակ կարգեր: ԵՊԼՀ-ն ունի անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ: Գործող կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին Կառավարման, Գիտական և ֆակուլտետային խորհուրդներում ներգրավվածության միջոցով մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ԵՊԼՀ-ն կարևորում է որակի ապահովման ներքին համակարգի ներդրումը: ՈԱԿ-ի կողմից մշակվել է ՈՐԱԿ - 2015 ԵՊԼՀ Որակի ապահովման կենտրոնի ռազմավարական ծրագիրն ու գործողությունների պլանը, որը ԵՊԼՀ-ում որակի ապահովման ներքին համակարգի գործառությունը կարգավորող միասնական փաստաթուղթ է: Այն ներկայացնում է որակի ապահովման տեսանկյունից ԵՊԼՀ-ի կողմից տարվող քաղաքականությունը: ԵՊԼՀ բոլոր ստորաբաժանումներում աշխատանքներ են մեկնարկել իրենց գործունեությունում որակի ապահովման շրջափուլի ներդրման ուղղությամբ: Սակայն բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար ՈԱԿ-ը դեռևս չի ապահովում:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

1. ԵՊԼՀ-ն ունի կառավարման հստակ համակարգ: Առկա են կառավարման մարմինների ընտրության, գիտական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնների զբաղեցման հստակ կարգեր:
2. ԵՊԼՀ-ում կիրառվում են դասավանդման և ուսումնառության բազմազան մեթոդներ, որոնք հիմնականում նպաստում են դասընթացների վերջնարդյունքների ձևավորմանը:
3. Բուհը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ, խորհրդատվությունները իրականացվում են ըստ սահմանված ժամանակացույցերի:
4. ԵՊԼՀ-ն ապահովում է իր գործունեության թափանցիկությունը ռեկտորի տարեկան հաշվետվությունները և բոլոր պաշտոնական փաստաթղթերը ԵՊԼՀ-ի կայքում տեղադրելու միջոցով: Կայքը կիրառվում է նաև որպես հասարակության հետ հետադարձ կապի գործիք:
5. ԵՊԼՀ-ն խիստ կարևորում է միջազգայնացումը և իր Ռազմավարական ծրագրում ունի դրան նվիրված առանձին բաժին: ԵՊԼՀ-ի առաքելությունում նշվում է եվրաինտեգրման կարևորությունը, սակայն բուհը կապեր ունի նաև եվրասիական տարածքում և Արևելքում: ԵՊԼՀ-ն համագործակցում է մի շարք միջազգային կազմակերպությունների հետ՝ Եվրամիության, Եվրախորհրդի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ԱՊՀ-ի լեզվական և լեզվամշակութային քաղաքականությունը մշակող կառույցների: Համալսարանը համագործակցում է նաև այլ երկրների համալսարանների հետ TEMPUS-ի ծրագրերի շրջանակներում:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

1. ԵՊԼՀ-ի քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը ամբողջությամբ չեն արտացոլված համալսարանի առաքելությունում:
2. Համալսարանն ունի ռազմավարական ծրագիր: Սակայն միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերը միշտ չէ, որ կապված են Ռազմավարական ծրագրի հետ:
3. ԵՊԼՀ-ի քաղաքականությունը և ընթացակարգերը պլանավորվում են, իրականացվում, սակայն գնահատման գործընթացները մասամբ են իրագործվում, իսկ բարելավման գործընթացները հիմնականում հիմնված չեն գնահատման արդյունքների վրա:

4. ԵՊԼՀ-ում դասընթացների մակարդակով առկա են հստակ ձևակերպված ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներ: Սակայն ընդհանուր ՄԿԾ-ի մակարդակում վերջնարդյունքները հստակ ձևակերպված չեն:
5. Համալսարանը իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված որոշ աշխատանքներ, սակայն դրանք համակարգված չեն: Արդյունքում առկա են ամբիոններ, որոնք ունեն վերապատրաստման բարձր արդյունքներ, սակայն կան նաև ամբիոններ, որոնց ցուցանիշները այդ առումով բավականին ցածր են: Որպես կանոն վերապատրաստումները իրականացվում են դասախոսների նախաձեռնությամբ, դրամաշնորհների շրջանակներում:
6. ԵՊԼՀ-ում առկա է ֆինանսական ռեսուրսների բաշխման հստակ սահմանված գործընթաց: Ծախսերի պլանավորումը կատարվում է ամենամյա գործընթացների իրականացման տեսանկյունից, տարեկան բյուջեի նախահաշիվ կամ կատարողական կազմելիս բուհը չի առաջնորդվում ռազմավարական գերակա ուղղություններով, ինչը դժվարացնում է ֆինանսական ռեսուրսների բաշխման գնահատումը:
7. Որակի ապահովման ներքին համակարգը ձևավորման սկզբնափուլում է, անհրաժեշտ է մշակել և կիրառման մեջ դնել որակի ապահովման հայեցակարգը, քաղաքականությունը և որակի ապահովման ձեռնարկը:
8. Բացակայում են որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության ապահովման մեխանիզմները:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաքելությունը և նպատակները.

1. Հստակեցնել առաքելությունը, ապահովել առաքելության համահունչությունը ՈԱՇ-ին, ընդ որում՝ ցանկալի կլիներ ապահովել համահունչությունը նաև եվրոպական որակավորումների ազգային շրջանակին, ինչը կապահովի համալսարանի մրցունակությունը ՀՀ ՈԱՇ-ի լրամշակման և ներդրման փուլում:
2. Հստակեցնել առաքելության մեջ հաստատության «մանկավարժական» ուղղվածությանը վերաբերող դրույթները:
3. Մշակել առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և գործիքներ:

Կառավարումն ու վարչարարությունը.

1. Համակարգել և հստակեցնել կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների արդյունավետ փոխգործակցությունը:
2. Մշակել միջամբիոնային և միջֆակուլտետային լավագույն փորձի փոխանակման մեխանիզմներ:
3. Հստակեցնել Ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույցը:
4. Ստորաբաժանումների կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը բխեցնել Ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույցից, դրանով իսկ նպաստելով վերջինի արդյունավետ իրականացմանը:
5. Ուսումնասիրել և վերլուծել գործունեության վրա ազդող արտաքին գործոնները:
6. Մշակել պլանավորման, իրականացման, գնահատման, բարելավման արդյունավետ շրջափուլ: Շրջափուլի մշակումից անմիջապես հետո, անհրաժեշտ է նաև կազմակերպել վարչական աշխատակիցների վերապատրաստում, քանի որ արդյունավետ կառավարման համար

անհրաժեշտ են ոչ միայն գործընթացը նկարագրող քաղաքականությունը և ընթացակարգերը, այլ նաև այդ փաստաթղթերը ճիշտ կիրառելու կարողություններով օժտված անձնակազմ:

Մասնագիտության կրթական ծրագրերը.

7. Հստակ ձևակերպել բակալավրի և մագիստրոսի ՄԿԾ-ների ակնկալվող վերջնարդյունքները և ապահովել դրանց համապատասխանությունը ՈԱՇ-ին:
8. Մշակել առարկաների ելքային արդյունքների գնահատման վրա հիմնված գնահատման համակարգ:
9. Մշակել ակադեմիական ազնվության հիմնահարցերը կանոնակարգող հստակ փաստաթուղթ:
10. Մշակել բենչմարքինգի իրականացման հստակ մեթոդաբանություն:

Ուսանողները.

11. Կատարելագործել ուսանողների կարիքների վերհանման ընթացակարգերը և մեխանիզմները՝ դրանց հաղորդելով առավել համակարգված բնույթ:
12. Կատարելագործել օտարերկրյա ուսանողների հավաքագրման քաղաքականությունը:
13. Ուսանողների կարիերային նպաստելու նպատակով ՄԿԾ-ների մշակմանը ներգրավել թիրախային գործատուներին:
14. Մշակել մեխանիզմներ ուսանողներին բուհի գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու համար:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը.

15. Վերհանել յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար անհրաժեժշտ պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջները:
16. Ըստ կրթական ծրագրերի մշակել պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող հստակ պահանջներ՝ հաշվի առնելով կոնկրետ ՄԿԾ-ների առանձնահատկությունները:
17. Պլանավորել դասախոսների կոմպետենցիաների զարգացումը:
18. Մշակել ՊԴ և ուսումնաօժանդակ անձնագրի պաշտոնի անձնագրեր:

Հետազոտությունը և զարգացումը.

22. Մշակել և կիրառել գիտահետազոտական աշխատանքի արդյունավետության և արդիականության գնահատման գործիքներ:
23. Ապահովել հետազոտության կապը ուսումնառության հետ:
24. Բուհի գիտական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար ավելացնել համապատասխան ֆինանսական ներդրումները:
25. Մշակել հետազոտական գործունեության միջազգայնացման հստակ ռազմավարություն:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ.

26. Բարելավել համալսարանի ենթակառուցվածքը՝ միջոցներ ուղղորդելով ոչ միայն համակարգչային վերազինման, այլև՝ լսարանների կահավորման ուղղությամբ:
27. Ստեղծել դասերի ավարտից հետո ուսանողների խմբային աշխատանքների իրականացման համար նախատեսված լսարաններ՝ ապահովված անհրաժեշտ գրականությամբ և համակարգչային տեխնիկայով:
28. Մշակել համապատասխան մեխանիզմներ բուհում առկա ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի գնահատման համար:
29. Իրականացնել ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխման մշտադիտարկում՝ ըստ ռազմավարական զարգացման ծրագրի նպատակների և ուղղությունների:

30. Հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին հնարավորինս ապահովել ուսման համար արհրաժեշտ պայմաններով:

Հասարակական պատասխանատվությունը.

31. Մշակել հասարակության հետ կապերի հատուկ ռազմավարություն:
32. Ապահովել հասարակության հետ կապերի շարունակականությունը:
33. Պլանավորել միջոցառումները՝ բարձրացնելով գործընթացի արդյունավետությունը:

Արտաքին կապերը և միջազգայնացումը.

34. Մշակել համալսարանի միջազգայնացման հստակ քաղաքականություն, ընթացակարգեր և ռազմավարական զարգացման պլան:
35. Մշակել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը գնահատող գործիքներ:
36. Նվազենցել համագործակցության պայմանագրերի ոչ լիաժեք կատարման ռիսկը՝ փնտրելով ֆինանսավորման նոր աղբյուրներ:

Որակի ներքին ապահովման համակարգը.

37. Մշակել որակի ապահովման հայեցակարգ և քաղաքականություն:
38. Ձևավորել որակի ապահովման ներքին համակարգ, որը կհամապատասխանի ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին և ESG չափորոշիչներին:
39. Մշակել որակի ապահովման ձեռնարկ:
40. Ապահովել ՈԱԿ-ի ֆինանսական անկախությունը և ապահովվածությունը բոլոր անհրաժեշտ նյութական միջոցներով:
41. Մեխանիզմներ ստեղծել շահակիցներին որակի ապահովման գործընթացներին մասնակից դարձնելու համար:
42. Մշակել հստակ մեխանիզմներ, որոնք թույլ կտան գնահատել և պարբերաբար վերանայել որակի ներքին ապահովման համակարգը:

Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը ընդունում է, որ փորձագիտական խմբի կողմից տրամադրված խորհրդատվությունները բուհի ռազմավարության շրջանակներում են, և ներկայացրել է փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ռեկտորի կողմից 7.02.2014թ. հաստատված ծրագիրը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՈՒՀԻ ԾՐԱԳԻՐԸ

Ուսումնասիրելով Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների բարելավումների ծրագիրը, կարելի է եզրակացնել.

1. Ներկայացված պլան-ժամանակացույցի գործողությունները դուրս են բերվել ԵՊԼՀ 2013-2017թթ. Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանից, որը հաստատվել է 20.12.2013թ. ԵՊԼՀ-ի գիտխորհրդի նիստում:
2. Պլանում գործողություններ են նախատեսված փորձագիտական զեկույցում զետեղված գրեթե բոլոր խորհրդատվությունների ուղղությամբ, բացառությամբ՝

a. չափանիշ 7-ի «Հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին հնարավորինս ապահովել ուսման համար անհրաժեշտ պայմաններով»
b. չափանիշ 10-ի «Ապահովել ՈԱԿ-ի ֆինանսական անկախությունը և ապահովվածությունը բոլոր անհրաժեշտ նյութական միջոցներով» խորհուրդների:

Սակայն նշված է, որ դրանք նախատեսվում է ներառել հաջորդ հնգամյա ռազմավարական ծրագրում:

3. Գործողությունների հաջորդականությունը տրամաբանական է, սակայն գործողությունները և դրանց իրականացման քայլերը առանձնացված չեն, ինչը դժվարացնում է քայլերի արդյունավետ գնահատումը:
4. Պլանում հիմնականում նշված են միայն գործողությունների իրականացման համար պատասխանատու կառույցները, պատասխանատու անձինք նշված են միայն միքանի գործողությունների համար:
5. Գործողությունների իրականացման համար նախատեսված ժամանակահատվածները իրատեսական են, սակայն առանձին քայլերի համար ժամկետները նշված չեն:
6. Գործողությունների իրականացման վերջնարդյունքները և վերջնարդյունքի գնահատման ցուցիչները որոշ դեպքերում միացված են:

Եզրահանգում. Ծրագրի հիմնական մասի իրականացումը ռիսկեր չի պարունակում: Համալսարանը պլանավորել է մեկնարկել հիմնական ոլորտներում անհրաժեշտ աշխատանքների իրականացումը մոտակա երկու տարվա ընթացքում: Թերությունների վերացման ծրագիրը հաջող իրականացման արդյունքում մշակված կլինի համալսարանի գործունեության հիմնական ոլորտների արդյունավետության գնահատման և բարելավման գործիքները և ընթացակարգերը և սկսված կլինեն բարելավման հիմնական գործընթացները:

Ելնելով վերոգրյալից, ՈԱԱԿ-ը Հավատարմագրման հանձնաժողովին առաջարկում է իր որոշման մեջ ԵՊԼՀ-ի ուշադրությունը հրավիրել հետևյալ կետերի իրականացման վրա՝

1) առաջնահերթ լուծում տալ **Մասնագիտության կրթական ծրագրեր, Հետազոտություն և զարգացում, Ենթակառուցվածքներ և ռեսուրսներ, Որակի ներքին ապահովման համակարգ** ոլորտներում առկա խնդիրներին,
2) «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12 կետով կամ Հավատարմագրման հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում պարբերաբար ՈԱԱԿ ներկայացնել գրավոր զեկույց իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ,
3) բուհի կողմից ներկայացված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի վերանայման ժամանակ հաշվի առնել սույն եզրակացության մեջ նշված դիտողությունները ծրագրի վերաբերյալ:

ՈԱԱԿ-ը գտնում է, որ առաջարկվող բարեփոխումները կնպաստեն ինքնավերլուծության զեկույցում ներկայացված համալսարանի հավակնությունների իրականացմանը և հիմք կհանդիսանան հաջորդող գնահատման համար:

Փորձագ. խմբի ղեկավար **ՈԱԱԿ Համակարգող**

Հավելված 1

Փորձագիտական խմբի կազմը.

- Դոց. Լիլիթ Զաքարյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, ՀՀ (փորձագիտական խմբի ղեկավար);
- Պրոֆ. Դեվիդ Թիմս, PhD, Կրթության որակի ապահովման խորհրդատու, Մեծ Բրիտանիա;
- Պրոֆ. Ելենա Երզնկյան, բանասիրական գիտությունների դոկտոր, ԵՊՀ անգլերեն լեզվի թիվ 2 ամբիոնի վարիչ, ՀՀ;
- Դոց. Աղավնի Հակոբյան, տնտեսական գիտությունների թեկնածու, ՀՊՏՀ արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ, ՀՀ;
- Ուսանող Անի Գասպարյան, Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ուսանող, ՀՀ:

ՈԱԱԿ-ի աջակցող աշխատակազմը.

- Մկրտիչ Այվազյան, ֆիզմաթ. գիտ թեկն., դոցենտ, Ինստիտուցինալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավար և խմբի աշխատանքների համակարգող,
- Ալինա Խաչիկյան, ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ, թարգմանիչ,
- Լիլիթ Ղազարյան, ՈԱԱԿ քարտուղարության մասնագետ, քարտուղար-սղագրող:

Հավելված 2

ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ[3]

Փորձագիտական խումբը իր գնահատումը ըստ հավատարմագրման չափանիշների ներկայացրել է հետևյալ աղյուսակով.

ՉԱՓԱՆԻՇ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
1. Առաքելությունը և նպատակները	ՄԱՍԱՄԲ ԲԱՎԱՐԱՐ
2. Կառավարումն ու վարչարարությունը	ՄԱՍԱՄԲ ԲԱՎԱՐԱՐ
3. Մասնագիտության կրթական ծրագրերը	ՄԱՍԱՄԲ ԲԱՎԱՐԱՐ
4. Ուսանողները	ՄԱՍԱՄԲ ԲԱՎԱՐԱՐ
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը	ՄԱՍԱՄԲ ԲԱՎԱՐԱՐ
6. Հետազոտությունը և զարգացումը	ՄԱՍԱՄԲ ԲԱՎԱՐԱՐ
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	ՄԱՍԱՄԲ ԲԱՎԱՐԱՐ
8. Հասարակական պատասխանատվությունը	ԲԱՎԱՐԱՐ
9. Արտաքին կապերը և միջազգայնացումը	ԲԱՎԱՐԱՐ
10. Որակի ներքին ապահովման համակարգը	ՄԱՍԱՄԲ ԲԱՎԱՐԱՐ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	**ՄԱՍԱՄԲ ԲԱՎԱՐԱՐ**

[3] Գնահատումը կատարելիս փորձագիտական խումբը հետևել է «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգին» և Փորձաքննության անցկացման ձեռնարկում նկարագրված ընթացակարգին՝ իրականացնելով նախ չափորոշիչների, ապա նաև չափանիշների գնահատում: Կիրառվել է **«անբավարար»**, **«մասնակի բավարար» և «բավարար»** սանդղակը:

Փորձագիտական խումբը գնահատելիս օգտվել է հետևյալ սկզբունքներից.

- **անբավարար է,** եթե չափանիշի պահանջներին չի համապատասխանում, նման ձևով շարունակելն անթույլատրելի է, և հրատապ բարելավումների անհրաժեշտություն կա,
- **մասնակի բավարար է,** եթե չափանիշի ոչ բոլոր պահանջներին է համապատասխանում, սակայն իրատեսական է, որ, անհրաժեշտ բարելավումներ իրականացնելու դեպքում, ողջամիտ ժամանակահատվածում կարող է համապատասխանել,
- **բավարար է,** եթե համապատասխանում է չափանիշի պահանջներին, չնայած որ կարող է լինել բարելավման անհրաժեշտություն: